Հիմք ընդունելով վերոնշյալը՝ Դատարանը գտնում է, որ սույն գործով ներկայացված հայցը պետք է թողնել առանց քննության:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101 հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 110 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայցն առանց քննության թողնելու կամ գործի վարույթը կարճելու դեպքում դատական ծախսերի փոխհատուցման պարտականությունը դրվում է հայցվորի վրա, բացառությամբ սույն հոդվածով նախատեսված դեպքերի:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ներկայացված հայցը պետք է թողնել առանց քննության, իսկ Հայցվորը նախապես վճարել է հայցադիմումի համար և վերաքննիչ բողոքի համար պետական տուրքի գումարները, Դատարանը եզրահանգում է, որ դատական ծախսերի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 180, 181, 362 և 199-200 հոդվածներով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Թիվ ԵԴ/4848/02/23 քաղաքացիական գործով «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ ՀՀ պաշտպանության նախարարության՝ թիվ «ՀՄԱԱՊՁԲ-22-7/1-1» ծածկագրով գնման պայմանագիրը միակողմանի լուծելու մասին 27.01.2023թ. որոշումն անվավեր ճանաչելու և «ՄՈՍԷՍՔՈ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, թողնել առանց քննության:

Դատարանի 2023թ. փետրվարի 13-ի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցը վերացնել:

Դատական ծախսերի հարցը համարել լուծված:

Որոշումն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից յոթ օր հետո և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից յոթնօրյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Գ. ՎԱՐԴԱՆՅԱՆ